

ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2014 ՀԱՅԱՍՏԱՆ

Հրապարակվել է 14 հոկտեմբերի, 2015թ.

Ամփոփիչ ակնարկ

Սահմանադրությունը երաշխավորում է կրոնի ազատությունը և սահմանում է, որ եկեղեցին անջատ է պետությունից, սակայն միաժամանակ ճանաչում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմություն առարկան ներառված է հանրակրթական դպրոցների պարտադիր ուսուցման առարկաների ցանկում: Կառավարության քայլերը, որոնք անդրադարձել են փոքրամասնական կրոնական խմբերի վրա ներառել են. ճնշումներ նորակոչիկների նկատմամբ, որպեսզի ծառայության սկզբում նրանք միասին մկրտվեն որպես հայ առաքելականներ. կրոնական հիմքերով պայմանավորված խտրականություն բանակում. պաշտամունքի վայրեր ձեռք բերելու խոչընդոտներ, խտրականություն կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանրակրթական համակարգում ու հանրային հատվածում՝ զբաղվածության հետ կապված հարցերում: Կառավարությունը մատնանշել է, որ մտադիր չէ փոխել դպրոցական ուսուցման ծրագիրը՝ այնտեղից հանելով Հայոց եկեղեցու պատմություն պարտադիր առարկան, որը տեղացի շատ փորձագետների կողմից դիտարկվել է որպես դավանանքի ուսուցում ու քարոզչություն: Եհովայի վկաներն իրենց գոհունակությունն էին արտահայտել 2013թ. օրենքում կատարված փոփոխություններից հետո կառավարության կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայության իրագործման վերաբերյալ, որպես տարբերակ այն քաղաքացիների համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը:

Շատ լրատվամիջոցներ շարունակում էին իրենց լրատվական հրապարակումներում փոքրամասնական կրոնական խմբերին որակել որպես «պետության թշնամի», սակայն կրոնական խմբերի գերակշիռ մասը նշել էր, որ նախորդ տարիների համեմատ լրագրողները սկսել էին առավել օբյեկտիվ լուսաբանել իրենց գործունեությունը: Մի քանի կրոնական կազմակերպություններ նշում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետ հարաբերությունների բարելավման մասին: Միջին դասարանների աշակերտների շրջանում անցկացված հարցումը ցույց է տվել, որ հարցվողները ակնհայտ խիստ բացասական վերաբերմունք ունեն Հայաստանյայց առաքելական եկեղեցուց բացի, բոլոր այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ:

ԱՄՆ դեսպանը, դեսպանության ներկայացուցիչներն ու այցելող պաշտոնյաները խրախուսել են միջդավանական երկխոսությունը հրապարակավ և պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում՝ շեշտադրելով, որ յուրաքանչյուր ոք պետք է կարողանա

անարգել դավանել իր հավատքին և որ կրոնական փոքրամասնությունների անդամները չպետք է դիտարկվեն որպես սպառնալիք պետության համար: Դեսպանության պաշտոնյաները տարվա ընթացքում աշխատել են կրոնական ու քաղաքացիական հասարակության առաջնորդների հետ՝ խթանելու կրոնական հանդուրժողականությունը:

Մաս I. Կրոնական ժողովրդագրությունը

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր ազգաբնակչությունը կազմում է շուրջ 3.1 միլիոն (2014թ. հուլիսի դրությամբ): 2011թ. մարդահամարի արդյունքներով ազգաբնակչության 92 տոկոսն իրենց բնորոշում են որպես Հայաստանյազ Առաքելական եկեղեցուն հարող: Մյուս կրոնական խմբերը, որոնցից յուրաքանչյուրը կազմում են բնակչության հինգ տոկոսից պակաս մասը ներառում են. կաթոլիկներ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, հայ-ավետարանական եկեղեցու անդամ քրիստոնյաներ, մոլոկաններ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաների տարբեր խմբեր, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու անդամներ (մորմոններ), եզդիներ, ասորիներ, հրեաներ, սունի մահմեդականներ, շիա մահմեդականներ և հեթանոսներ:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Հրեաների մեծ մասը, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը՝ հիմնականում շիա մահմեդականներ՝ ներառյալ իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

Մաս II. Կրոնական ազատության հանդեպ հարգանք կառավարության կողմից

Իրավական դաշտ

Սահմանադրությամբ երաշխավորվում է մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը և սահմանում է եկեղեցու և պետության տարանջատումը: Միաժամանակ, սահմանադրությունը նաև ճանաչում է «Հայաստանյազ Առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությունը նշում է, որ անձի դավանանքի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել միայն ի շահ հասարակական անվտանգության, առողջության և բարոյականության:

Կրոնական խմբերի ոլորտը կարգավորող օրենքը կրոնական խմբերի գրանցման բացահայտ պահանջ չի դնում, սակայն միայն գրանցված խմբերն են, որ ունեն իրավաբանական անձի

կարգավիճակ: Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը կամ կազմակերպությունը պետք է Պետեզիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունից առ այն, որ համայնքը կամ կազմակերպությունը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» ուսմունքով, որ իր դավանանքով մտնում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ և որ այն «զերծ է նյութապաշտությունից և ուղղված է հոգևոր ոլորտները» և ունի առնվազն 200 չափահաս անդամ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են համարվում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Այս պայմանները չեն կիրառվում ազգային փոքրամասնությունների, օրինակ՝ մոլդկանների և եզդիների կրոնական կազմակերպությունների համար: Օրենքում նաև թվարկվում են կրոնական կազմակերպությունների իրավունքները, որոնք ներառում են. ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջունքների բավարարումը, կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր, օգտվել զանգվածային լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Ըստ օրենքի, այս իրավունքներն առաջանում են տվյալ կրոնական կազմակերպության գրանցվելու պահից:

Օրենքը Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, և ազատագրկման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում: Օրենքն արգելում է «հոգեորսությունը», սակայն չի սահմանում «հոգեորսություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, սակայն Հայաստանյաց Առաքելական եկեղեցու պատմությունը ներառված է հանրակրթական պարտադիր ուսուցման առարկայացանկում և դասավանդվում է 5-11 դասարաններում: Եկեղեցին իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Եկեղեցին կարող է նաև առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել: Աշակերտները չեն կարող չհաճախել այդ առարկայի դասերին: Օրենքը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն իրավունք է շնորհում կազմակերպել կրոնի կամավոր արտածրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամներին կրոնական ուսուցում տրամադրել իրենց պատկանող հաստատություններում:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը օրենքում 2013թ. կատարված փոփոխությունների համաձայն գործում է ընդհանուր զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը շարունակում է համարվել քրեորեն պատժելի արարք:

Քրեական օրենսդրությամբ արգելվում է կրոնական աստվածության հրահրումը բռնության, հրապարակային հայտարարությունների կամ լրատվության միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (426-1.064 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 2-ից 6 տարի ժամկետով: Քրեական օրենսգրքով նաև արգելվում է դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը, որի համար սահմանվում է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով (426 ԱՄՆ դոլար) կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Օրենսդրությամբ ապահովվում է խտրականության բացառումը քաղաքացիական, քաղաքական, հանրային, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում՝ անկախ կրոնական պատկանելությունից կամ դավանանքից, սակայն չեն նախանշվում պատժամիջոցներ այս բնույթի խախտումների համար:

Կառավարության գործունեությունը

Կառավարության քայլերը, որոնք են անդրադարձել փոքրամասնական կրոնական խմբերի վրա ներառում են. նորակոչիկների մկրտությունը ծառայության սկզբում. կրոնական հիմքերով պայմանավորված խտրականությունը բանակում. կրոնական հավաքների համար տարածքներ վարձակալելու ու պաշտամունքի վայրեր կառուցելու արգելքները և շարունակվող խտրականությունը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանրակրթական համակարգում:

Կրոնական խմբերի հաղորդումների համաձայն մի քանի դեպքերում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ճնշումներ է գործադրել նորակոչիկների նկատմամբ, որպեսզի նրանք միասին մկրտվեն որպես հայ առաքելականներ: Ըստ դիտորդների որոշ դեպքերում նորակոչիկները չեն հրաժարվել մկրտվելուց, քանի որ վախեցել են, որ դրանով աչքի կընկնեն ու կմեկուսացվեն: Այլ դեպքերում, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զինվորական քահանաները, և որոշ, բայց ոչ բոլոր, հրամանատարներ հետաքրքրվել են գորակոչիկների կրոնական պատկանելությամբ և ճնշումներ են կիրառել Հայաստանյայց Առաքելական եկեղեցուց զատ այլ խմբերի հետևորդների ու աթեիստների վրա՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զինվորական քահանայի հետ աղոթելու ու կրոնի դասերի հաճախելու նպատակով: Ըստ հաղորդումների կառավարությունը թույլ չի տվել այլ կրոնական խմբերի զինվորական քահանաների այցելությունը բանակ:

Ապրիլի 26-ին Պաշտպանության նախարարությունն անցկացրեց «Քայքայիչ պաշտամունքները և փողոցային արատավոր բարքերը որպես պաշտպանունակության սպառնալիք» թեմայով գիտագործնական կոնֆերանսը: Բացման խոսքում պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանն ասաց, որ Հայաստանի պաշտպանության համար կարևոր է, որ բոլորը հավատան նույն արժեքներին, այդ թվում՝ Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն: Իր խոսքի ավարտին նախարարը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին «Քայքայիչ աղանդների» դեմ պայքարին միանալու համար:

Թեպետ ուստիկանությունը պաշտպանել ու որոշ կրոնական կազմակերպությունների, օրինակ՝ Եհովայի վկաներին, թույլ է տվել հրապարակավ տարածել իրենց տեղեկատվությունը, մյուս խմբերի կողմից հաղորդումներ են եղել, որ պատկան մարմիններն իրենց այս իրավունքը մերժել են:

Տարվա ընթացքում բազմաթիվ կրոնական խմբերի կողմից հաղորդումներ են եղել հավաքների վայրեր վարձակալելու ու պաշտամունքի վայրեր կառուցելու հետ կապված դժվարությունների մասին: Ըստ Եհովայի վկաների տեղական իշխանությունների ներկայացուցիչները խոչընդոտել են հողատարածքների հետ կապված ճարտարապետական նախագծման, շինարարական ու տարածքը զբաղեցնելու վերաբերյալ թույլտվությունների ստացմանը: Եհովայի վկաների բողոքն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի որոշման, որով «հարևաններից ստացած բողոքների» հիման վրա նրանց մերժվել էր պաշտամունքի երեք վայրեր կառուցելու թույլտվության տրամադրումը, դեռ ընթացքի մեջ էր: Ըստ Եհովայի վկաների ու մյուս կրոնական խմբերի շինարարական թույլտվություններ ստանալու հարցում ավելի հեշտ է եղել, երբ դիմում է ներկայացվել անհատի կողմից կամ եթե շինությունը նախատեսված չի եղել որպես եկեղեցի:

Կրոնական խմբերն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շարունակել են հորդորել կառավարությանը վերացնել կրոնին առնչվող հարցերը կարգավորող գործող օրենսդրության իրավական բացերը, ոչ հստակ դրույթները և հակասությունները և երաշխավորել խղճի, կրոնի և դավանանքի ազատությունը բոլորի համար անկախ քաղաքացիությունից. ճանաչել կրոնը կամ դավանանքը փոխելու ազատությունը. երաշխավորել հրապարակավ ու մասնավոր կրոնը և հավատքը դրսևորելու ազատությունը. պարզաբանել արդյոք կրոնական կազմակերպություններն իրավասու են լինել իրավաբանական անձ և դրա գործածումը. և ավելի ճշգրիտ ու հստակ սահմանել օրենքի կիրառման շրջանակը, ինչը բազմիցս առաջարկվել է Եվրոպայի Խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի կողմից:

Իրավապաշտպանները շարունակել են մտահոգություն հայտնել հանրակրթության ոլորտում Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետզհետե մեծացող ներկայության վերաբերյալ:

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» հասարակական կազմակերպությանը չտրվեց թույլտվություն դիտարկել ՀՀ Կրթության և գիտության

նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների համար մշակած և 2012-13 ուսումնական տարվանից ներդրվող «Հայոց եկեղեցու պատմություն/քրիստոնեական կրթություն» նոր առարկայի պիլոտային դասերը: Ըստ նախարարության պաշտոնյայի պիլոտային դասընթացը «հոգևոր ուղղվածությամբ էթիկայի դասեր են»: Տեղական դիտորդները դասընթացը համարում էին կրոնական ուսուցում, որն ի թիվս այլոց ներառում էր թեմաներ, ինչպիսիք էին աշխարհի աստվածային արարումը, աստվածաշնչյան պատմությունները, Քրիստոսի պատվիրանները և աղոթքներ: Հասարակական կազմակերպությունը հայտնում էր, որ դժվարություններ են ունեցել դասընթացի բովանդակության վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ ու դասընթացն իրականացնող դպրոցների ցանկը ձեռք բերելու հարցերում:

Մայիսի 21-ին Ազգային ժողովում ելույթ ունենալիս կրթության նախարար Արմեն Աշոտյանն ասաց, որ կառավարությունը մտադիր չէ հետևել Երեխայի իրավունքի հարցերով ՄՄԿ-ի կոմիտեի 2013թ. առաջարկին, որով պահանջվում է վերանայել դպրոցական առարկայական ծրագիրը և վերացնել «Հայոց եկեղեցու պատմություն» պարտադիր առարկան: Նախարարը նաև ասաց, որ կառավարությունը պլանավորում է նոր ծրագրեր՝ ամրապնդելու «հայրենասիրական դաստիարակության բաղադրիչը կրթական համակարգում» և որ քրիստոնեական կրթության վերաբերյալ նոր առարկան արդեն դասավանդվել է տարրական դպրոցի 3000 աշակերտների:

Ապրիլի 22-ին փորձագետների մի խումբ «Բաց հասարակության հիմնադրամ – Հայաստանի» աջակցությամբ կլոր սեղան քննարկման ներկայացրեցին «Հայոց եկեղեցու պատմության դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա» ուսումնասիրությունը: Ըստ փորձագետների առարկան ավելին էր, քան միայն Հայոց եկեղեցու պատմությունը և ներկայացնում էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դավանական համակարգը, պատմությունը, արժեքները և ծիսակարգերը, որպես միակ ընդունելի կրոնը: Ըստ փորձագետների, առարկայի նյութերը, որոնք հավասարեցնում էին հայի ինքնությունը Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն հարող լինելուն, կասկածի տակ էին առնում այլ կրոնական խմբերը: Օրինակ՝ դասագրքերում բողոքականությունը ներկայացված էր որպես հայ ժողովրդի միասնականության սպառնալիք: Զեկույցում նշվում էր, որ առարկայի պարտադիր բնույթն ու բովանդակային մասը ձևավորելու հարցում եկեղեցու բացառիկ դերակատարումը հակասում էին պետության աշխարհիկ բնույթին: Ըստ Կրթության ազգային ինստիտուտի ծնողների կողմից առարկայի վերաբերյալ բողոքներ երբեք չեն ստացվել:

Եվրոպայի Խորհրդի կողմից հրապարակված մի զեկույցում հանրակրթական դպրոցներն առանձնացվում էին որպես կրոնական փոքրամասնությունների հանդեպ խտրական վերաբերմունքի ու կարծրատիպերի ձևավորման օջախ: Ուսումնասիրության մեջ բազմաթիվ հղումներ կային կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչ երեխաների նկատմամբ ուսուցիչների ու տնօրենների կողմից խտրականության դրսևորման հաղորդումներին,

որոնցում նշվում էր, որ նրանք մատնացույց էին անում կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաներին՝ դրանով իսկ ստեղծելով խնդիրներ այդ աշակերտների համար իրենց հասակակիցների հետ: Հայոց եկեղեցու պատմության հետ կապված առարկությունների մեծ մասն ըստ հաղորդումների եղել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ կապ ունեցող, բայց ոչ հավատացյալ ընտանիքների աշակերտների ու ծնողների կողմից: Փոքրամասնական քրիստոնեական կրոնական խմբերի երեխաներն ըստ հաղորդումների այդ առարկայի դասերին հաճախելու վերաբերյալ առարկություններ չեն ունեցել, քանի դեռ հարգվել են իրենց իրավունքները:

Եզդի համայնքի ներկայացուցիչներն ըստ հաղորդումների անհաջող բողոք են ներկայացրել Կրթության նախարարությանը, որպեսի իրենց երեխաների համար այս առարկան լինի ընտրովի:

Օգոստոսի դրությամբ Եհովայի վկաների 128 անդամներ, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, անցնում էին այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Խմբի հաղորդումների համաձայն իրենց անդամներին լավ են վերաբերվում և իրենք «շատ գոհ են», թե ինչպես է կառավարությունն իրականացնում 2013թ. կատարված օրենսդրական փոփոխությամբ ներդրված նոր ծառայությունը:

Տարբեր կրոնական խմբերի հաղորդումների համաձայն շարունակում էր խնդրահարույց մնալ հանրային հատվածում աշխատանքի հետ կապված խտրականության դրսևորումը Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն անդամ չհանդիսացող անձանց նկատմամբ, հատկապես՝ հանրակրթական համակարգում:

Մաս III. Հասարակության հարգանքը կրոնական ազատության նկատմամբ

Շատ լրատվամիջոցներ շարունակել են փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել որպես «աղանդներ» և հեռարձակել են քննարկումներ ու լրատվություն, որտեղ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հոգևորականները փոքրամասնական կրոնական խմբերը բնութագրել են որպես «պետության թշնամիներ»: Որոշ ԶԼՄ-ներ շարունակել են հրապարակել հոդվածներ, որտեղ փոքրամասնական կրոնական խմբերը բնութագրվում էին որպես հանցագործներ ու լրտեսներ: Նման հրապարակումների գերակշիռ մասում չի նշվել որևէ կոնկրետ կրոնական խումբ: Կրոնական խմբերի գերակշիռ մասը սակայն նշել է, որ նախորդ տարիների համեմատ իրավիճակը բարելավվել է, և լրագրողներն ավելի ճշգրիտ ու օբյեկտիվ կերպով են լուսաբանում իրենց գործունեությունը:

«Բաց հասարակության հիմնադրամ – Հայաստանի» աջակցությամբ Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասագրքերի բովանդակության ուսումնասիրման ընթացքում հեղինակներն անանուն հարցում էին անցկացրել 5-8-րդ դասարանների 254 աշակերտների շրջանում 6 տարբեր դպրոցներում՝ գնահատելու նրանց վերաբերմունքը Հայաստանյայց

Առաքելական եկեղեցու և մյուս կրոնական կազմակերպությունների վերաբերյալ: Հարցման արդյունքներով Հայաստանյաց Առաքելական եկեղեցուց զատ մնացած կազմակերպությունների վերաբերյալ հարցվողները խիստ բացասական վերաբերմունք են արտահայտել, երբեմն անգամ կողմնակից են եղել կրոնական կազմակերպությունների հանդեպ բռնություններին՝ դրանց համարելով ժողովրդի միասնականության սպառնալիք: Հարցվողները նաև ցանկանում էին, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին ավելի մեծ դերակատարում ունենա ու քահանաներն ավելի հաճախակի այցելեն դպրոցներ:

Ըստ տեղական դիտորդների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դպրոցականների արտահայտած ցանկություններն արտացոլում են բնակչության մեծամասնության կարծիքը. մարդկանց գերակշիռ մասը նորմալ է համարում, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին պետք է ավելի մեծ դերակատարում ունենա դպրոցում ու հասարակական կյանքում:

Մի շարք կրոնական կազմակերպություններ հաղորդել են, որ բարելավվել են հարաբերությունները Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետ այն բանից հետո, երբ 2013թ. նոյեմբերին Գարեգին 2-րդ Կաթողիկոսը ընտրվեց որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 8 համանախագահներից մեկը: Որոշ փոքրամասնական կրոնական խմբերի հաղորդումների համաձայն եղել են «դրական խտրականության» դրսևորումներ մասնավոր հատվածում աշխատանքի տեղավորման հետ կապված, որտեղ գործատուները դավանանքի հետ կապված պահվածքի շնորհիվ դրական լույսի ներքո են դիտարկել իրենց անդամներին:

Մաս IV. ԱՄՆ կառավարության քաղաքականությունը

Դեսպանը, դեսպանության ներկայացուցիչներն ու այցելող ԱՄՆ պաշտոնյաները հրապարակավ և պետական պաշտոնյաների, այդ թվում կառավարության պաշտոնյաների ու խորհրդարանականների հետ հանդիպումների ընթացքում խրախուսել են կրոնական ազատությունը և միջդավանական երկխոսությունը, որտեղ շեշտադրվել է, որ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անարգել դավանել իր հավատքին և որ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները չպետք է համարվեն սպառնալիք:

Դեսպանն հանդիպում է ունեցել Հայաստանյաց Առաքելական եկեղեցու Կաթողիկոսի (ընդհանուր առաջնորդ), մյուս եկեղեցիների առաջնորդների հետ՝ խթանելու կրոնական ազատությունն ու հանդուրժողականությունը և շեշտելու կրոնական խմբերի կողմից իրենց հավատքին անարգել դավանելու անհրաժեշտությունը: Դեսպանության այլ պաշտոնյաները տարվա ընթացքում կանոնավոր կերպով երկխոսել են կրոնական ու քաղաքացիական հասարակության առաջնորդների հետ՝ խթանելու կրոնական հանդուրժողականությունը:

Դեսպանության պաշտոնյաները հանդիպումներ են ունեցել կրոնական և ազգային-կրոնական փոքրամասնությունների լայն շրջանակի ներկայացուցիչների հետ, այդ թվում կաթոլիկների, ավետարանական տարբեր խմբերի, ադվենտիստների, բապտիստների,

Եհովայի վկաների, մորմոնների, եզդիների, ասորիների և հրեաների հետ, ինչպես նաև Հայաստանյաց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչների հետ՝ քննարկելու խղճի և կրոնի ազատության իրավունքը իրացնելու շուրջ երկրում տեղ գտած զարգացումները: Մի շարք խմբեր դեսպանության ներգրավվածությամբ են բացատրում իրենց գործերի հետ կապված հաջող լուծումների կամ շարունակական առաջընթացի ապահովումը, այդ թվում նաև դավանական նկատառումներով զինվորական ծառայություն չանցնող քաղաքացիների համար այլընտրանքային ծառայության ներդրման հարցում ցուցաբերվող շարունակական ուշադրությունը: